ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-1

ք.Երևան «19» «06» 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սեմանգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Աղումյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը:

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով՝ նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընտրել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է *8,535,450.0 (ութ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:* Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի NN 1, 2, 3 և 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012411378
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթրյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Սեմանգ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Գրիգորյան 24
«Կոնվերսբանկ» ՓԲԸ, Աշտարակ մ/ճ
Հ/Հ 1930066364790100
ՀՎՀՀ 05009344

Ս.Աղումյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«19»«06» 2018թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

Չ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գումարը	ընդհանուր քանակը	Մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
2	39121520	Հագուստի պահարան /աշխատակազմ/	Պատրաստված 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը՝ լ. 90սմ., խ. 60 սմ. բ. 180 սմ., պրոֆիլապատ դռներով վերնամասում տեղադրված քիվ: Ներսում ունենա ձող հագուստ կախելու համար, 2 դարակաշար նախատեսված գլխարկի համար, հետևի կողմից փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով՝ համապատասխան գույնի, բոլոր երևացող կողմերը փակցված լինեն PVS-ով, իսկ պտուտակները ծածկված լինեն ինքնասոսնձվող խցակալներով, բռնակները՝ երկաթյա, բարձրորակ, ծխնիները՝ երկաթյա, բարձրորակ: Տեսքը և գույները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	1,719,000.0	60	Հ.6 մանկ. Կարդանանց 16	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրվա ընթացքում
							Հ.13 մանկ. Բաղրամյան 21	4	
							Հ.16 մանկ. Հանրապետության 71	3	
							Հ.18 մանկ. Այգեստան 9փ.29	1	
							Հ.29 մանկ. Կոմիտաս 30	4	
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	4	
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	10	
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	8	
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ շ.4-րդ շ.	4	
							Հ.149 մանկ. Դրոյի 19	5	
							Հ.152 մանկ. Ազատության 4ա	1	
							Հ.158 մանկ. Դրոյի 16	6	
							Նուբարաշեն, Չնքուշի փող. 14/2	8	
6	39121320	Գրասեղան 1 /տնօրենի, մեթոդիստի կաբինետ/	Սեղանը պատրաստված լինի 18 մմ հաստությամբ լամինատից երեսը պրոֆիլապատ, աջ կողմից 4 դարակ մինչև հատակ ուղղորդիչ գլանիկով /SAMET , վերևի դարակները փականով, չափերը՝ ե. 2 մ, խ. 80 սմ, բ. 75 սմ: Դիմադիր՝ ե 1մ, խ. 60 սմ, բ 65-68սմ, երեսը և ոտքերը պրոֆիլապատ: Կողադիր սեղան բ 65-68սմ, լ-100սմ, խ. 60սմ, աջ կողմից համակարգչի համար նախատեսված տեղով. ձախ կողմում դարակաշար, երեսը պրոֆիլապատ, ետնամասը փակված լինի լամինատով, ունենա էլեկտրական լարերի համար նախատեսված անցքեր:Տեսքը և գույները նախապես համաձայնեցնել	հատ	135,000.0	3	Հ.30 մանկ. Կոմիտաս 58	1	
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	1	
							Նուբարաշեն, Չնքուշի փող. 14/2	1	

			պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկումը 2 տարի:						
7	39121320	Գրասեղան 2 /խմբասենյակ, դահլիճ,կաբինետներ/	Պատրաստված 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Երեսը պրոֆիլապատ, աջ կողմում բաց դարակ և մեկ դուռ մինչև հատակ, ձախ մասում ամբողջ նստատեղի լայնքով շարժական դարակ: Չափերը 1400x600x750մմ: Տեսքը և գույները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկումը 2 տարի:	հատ	1,892,550.0	93	Հ.6 մանկ. Վարդանանց 16	5	
							Հ.9 մանկ. Հանրապետության 62	1	
							Հ.13 մանկ. Բաղրամյան 21	4	
							Հ.16 մանկ. Հանրապետության 71	6	
							Հ.18 մանկ. Այգեստան 9փ.29	1	
							Հ.29 մանկ. Կոմիտաս 30	6	
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	5	
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	20	
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	6	
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ շ.4-րդ շ	7	
							Հ.149 մանկ. Դրոյի 19	6	
							Հ.152 մանկ. Ազատության 4ա	6	
							Հ.158 մանկ. Դրոյի 16	10	
							Նուբարաշեն, Չնքուշի փող 14/2	10	
8	39141120	Սպիտակեղենի պահարան /խմբասենյակ, լվացքատուն/	Պատրաստված 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Չափերը 600x450x1800 մմ բաժանված 4 հավասար դարակների,երկու լամինատե պրոֆիլապատ դռներով:Հետևի կողմից փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով՝ համապատասխան գույնի: Բռնակները՝ երկաթյա, բարձրորակ, ծխնիները՝երկաթյա, բարձրորակ: Տեսքը և գույները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկումը 2 տարի:	հատ	1,754,400.0	68	Հ.6 մանկ. Վարդանանց 16	1	
							Հ.13 մանկ. Բաղրամյան 21	5	
							Հ.29 մանկ. Կոմիտաս 30	7	
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	10	
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	12	
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	12	
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ շ.4-րդ շ	3	
							Հ.152 մանկ. Ազատության 4ա	10	
							Հ.158 մանկ. Դրոյի 16	2	
							Նուբարաշեն,	6	

							Չնքուշի փող. 14/2		
13	39111320	Մարմնամարզական նստարաններ	Պատրաստված 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ--ից: Չափերը ՝2500 մմ երկարությամբ, 300մմ լայնությամբ և 350 մմ բարձրությամբ, ոտքերը ձևավոր նստարան: Բոլոր անկյունները լինեն կլորացված: Տեսքը և գույները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկումը 2 տարի:	հատ	222,300.0	38	Հ.13 մանկ. Բաղրամյան 21	2	
							Հ.16 մանկ. Հանրապետության 71	2	
							Հ.18 մանկ. Այգեստան 9փ.29	1	
							Հ.29 մանկ. Կոմիտաս 30	2	
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	4	
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	4	
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	6	
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ շ.4-րդ շ	4	
							Հ.149 մանկ. Դրոյի 19	1	
							Հ.152 մանկ. Ազատության 4ա	2	
							Հ.158 մանկ. Դրոյի 16	2	
							Նուբարաշեն, Չնքուշի փող. 14/2	8	
16	39121200	Մանկական սեղան /4-5 տարեկան/	Սեղանը պատրաստվում է 18 մմ լամինացված ԴՍՊ-ից, բարձրությունը 48 սմ: Սեղանի անկյունները լինեն կլորացված: Երեսի չափերը 70*70սմ, իսկ կողային մասերը փաթաթված են ռետինե խրվող եզրաժապավենով, որը փակցվում է սիլիկոնով, կամ ՊՎԽ-ով (PVC-1մմ) համապատասխան հաստոցի միջոցով: Ոտքերը լամինատից իրար են միանում խաչաձև ոտքերը ամրանում են երեսին երկաթյա անկյունակներով: Սեղանի գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Աթաքումը և տեղադրումը ըստ պատվիրատուի ներկայացրած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը 2 տարի:	հատ	285,600.0	42	Հ.18 մանկ. Այգեստան 9փ.29	4	
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	10	
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	10	
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	8	
							Նուբարաշեն, Չնքուշի փող. 14/2	10	
17	39121200	Մանկական սեղան /5-6 տարեկան/	Սեղանը պատրաստվում է 18 մմ լամինացված ԴՍՊ-ից, բարձրությունը 54 սմ: Սեղանի անկյունները լինեն կլորացված: Երեսի չափերը 70*70սմ, իսկ կողային մասերը փաթաթված են ռետինե խրվող եզրաժապավենով, որը փակցվում է սիլիկոնով, կամ ՊՎԽ-ով (PVC-1մմ) համապատասխան հաստոցի միջոցով Ոտքերը լամինատից իրար են միանում խաչաձև ոտքերը ամրանում են երեսին երկաթյա անկյունակներով:Սեղանի գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Աթաքումը և տեղադրումը ըստ պատվիրատուի ներկայացրած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին:	հատ	644,100.0	95	Հ.6 մանկ. Վարդանանց 16	6	
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	13	
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	10	
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	40	
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ շ.4-րդ շ	6	
							Նուբարաշեն,	20	

			Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:				Ընքուշի փող. 14/2		
21	39141240	Մեկ տեղանոց մահճակալ	Մահճակալը պատրաստվում է 18 մմ լամինացված ՓՏՍ-ից: Չափսերը՝ 20*75*145 սմ: Մահճակալի բարձրությունը գետնից 25սմ: Սնարների բարձրությունը 60սմ,վերևի անկյունները կորացված են և պատված ռետինե խրվող եզրաժապավենով: Անրագոտիները 18մմ հաստության, 20սմ լայնության լամինատե շերտեր են, որոնք ունեն ալիքաձև տեսք:Ալիքի խորությունը 5սմ է, երկարությունը 20-30 սմ: Ներքնակների տակ գցվում է ամբողջական ՓՏՍ- 16 մմ հաստությամբ, որը հենվում է մեջտեղից անցնող 10x10 երկաթե գոտու (որը ամրացվում է սնարներին մետաղյա թիթեղներով) և սնարների վրա ամրացված դետալներին: Բոլոր անկյունները լինեն կլորացված: Լամինատե դետալների ոչ ռետինապատ հատվածները եզրակալվում են ՊՎԽ-ով (ՊՎՍ-0.4մմ): Ներքնակների բարձրությունը 10 սմ, երկարությունն ու լայնությունը ըստ մահճակալի չափերի, պարունակությունը 1.5 կգ բարձորակ սինտեպոնից, ներքնակների երեսը բամբակյա կտորից, գույնը զանազան-վառվռուն: Մահճակալի կոնստրուկցիոն բոլոր դետալները հավաքված են փայտյա չիվիներով (շկանտ) և փոքր ներփորվող դետալներով (մինիֆիքս) (մեկ մինիֆիքսի կողքը 2 հատ շկանտ) /6մմ հաստության, 25-30 մմ երկարության հեղյուսով/: Մահճակալի գույնը կամ գունային համադրումները համաձայնեցվում են պատվիրատուի հետ:Առաքումը և տեղադրումը՝ ըստ պատվիրատուի ներկայացրած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	1,792,500.0	125	Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	100	
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ շ.4-րդ շ	25	

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1. Կահույքը պետք է մատակարարվի Պատվիրատուի կողմից նախապես տրամադրված հասցեներ:
2. Կահույքի համար պարտադիր պայման է չօգտագործված լինելը:

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀ 900012411378
ՀԿՀՀ 02593108

Գ.Չթրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Սեմանգ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Գրիգորյան 24
«Կոնվերսբանկ» ՓԲԸ, Աշտարակ մ/ճ
ՀՎՀ 1930066364790100
ՀԿՀՀ 05009344

Ա.Ղուկասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«19»«06» 2018թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Պայմանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	39121520	Հագուստի պահարան /աշխատակազմ/	859,500.0	859,500.0	859,500.0	859,500.0	1,719,000.0	1,719,000.0	1,719,000.0	1,719,000.0
6	39121320	Դասեղան 1 /տնօրենի, մեթոդիստի կաբինետ/	112,500.0	112,500.0	112,500.0	112,500.0	225,000.0	225,000.0	225,000.0	225,000.0
7	39121320	Դասեղան 2 /խմբասենյակ, դահլիճ,կաբինետներ/	946,275.0	946,275.0	946,275.0	946,275.0	1,892,550.0	1,892,550.0	1,892,550.0	1,892,550.0
8	39141120	Սպիտակեղենի պահարան /խմբասենյակ, լվացքատուն/	877,200.0	877,200.0	877,200.0	877,200.0	1,754,400.0	1,754,400.0	1,754,400.0	1,754,400.0
13	39111320	Մարմնամարզական նստարաններ	111,150.0	111,150.0	111,150.0	111,150.0	222,300.0	222,300.0	222,300.0	222,300.0
16	39121200	Մանկական սեղան /4-5 տարեկան/	142,800.0	142,800.0	142,800.0	142,800.0	285,600.0	285,600.0	285,600.0	285,600.0
17	39121200	Մանկական սեղան /5-6 տարեկան/	322,050.0	322,050.0	322,050.0	322,050.0	644,100.0	644,100.0	644,100.0	644,100.0
21	39141240	Մեկ տեղանոց մահճակալ	896,250.0	896,250.0	896,250.0	896,250.0	1,792,500.0	1,792,500.0	1,792,500.0	1,792,500.0
ԸՆԴԱՄԵՆԸ			4,267,725.0	4,267,725.0	4,267,725.0	4,267,725.0	8,535,450.0	8,535,450.0	8,535,450.0	8,535,450.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012411378
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթրյան

ՎԱՃԱՌՈՂ
«Սեմանգ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Գրիգորյան 24
«Կոնվերսբանկ» ՓԲԸ, Աշտարակ մ/ճ
Հ/Հ 1930066364790100
ՀՎՀՀ 05009344

Ս.Աբրահամյան

Հավելված N 3
«19»«06» 2018թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19»«06» 2018թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ___
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք.Երևան «19» «06» 2018թ.

«Սեմանգ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Աղումյանի (նույնականացման քարտ 001352079, տրված 25.12.2015թ., 001-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /Վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱԲՈԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև 27.07.2018թ. (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Սեմանգ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Գրիգորյան 24
«Կոնվերսբանկ» ՓԲԸ, Աշտարակ մ/ճ
ՀՀ 1930066364790100
ՀԿՀՀ 05009344

Ս.Աղումյան _____
(ստորագրություն)

«19» «06» 2018թ.

«ՍԵՄԱՆԳ» ՍՊԸ
«СЕМАНГ» ՍՊԸ
«SEMANG» LLC
05009344

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ
2. Թիվ	
3.Ներկայացման ամսաթիվը՝ «___» «___» 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն) ՝ «Սեմանգ» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ, Աշտարակ մ/ճ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 1930066364790100	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 05009344	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Երևանի քաղաքապետարան	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900012511429	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 853,545.0 (ութ հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր քառասունհինգ)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովման համար	
18. Վճարման կատարման հիմքերը (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-1	
19. Վճարման պայմանները՝ ակցեպտավորված վճարում	
20. Առդիր էջերի քանակը ___ էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ «____» «____» 20____թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ «____» «____» 20____թ.